ՍՈՒՐՀԱՆԴԱԿ
ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

# ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

1849 — 18 ՄԱՐՏ | ՆՈՒՄԻՐԱ — 102 | ՃԻՄԱԶԻՒԼ ԷՎԷԼ 6 — 1265

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՆՏՈՆԱՑ թերթերնուս մէկուն մէջ ծանուցինք՝ վեհափառ Սուլթանին Իզմիտ գնալը ու վերադառնալը, հիմա ալ անոր վրայօք հետեւեալ տեղեկութիւնը կը հաղորդենք բարեսէր ընթերցողաց։

«Նորին Վեհափառութիւնը՝ բէշիկ ախորի ուրբաթ օրը ժամը չորսէն յետոյ շոգենաւով մեկնեցաւ Մայրաքաղաքէս, որուն ուղեկից էին արժանաւոր սպարապետը Ռէշիտ փաշան եւ Թօփխանէի միւշիր բարձրապատիւ Ֆէթհի փաշան. Նոյն օրը ժամը 10 էն յետոյ հասաւ Իզմիտ ու հոն գտնուած արքունի հովանոցը իջաւ։»

«Օգոստափառ Կայսրին այս Ճանապարհորդութիւնը Իզմիտու արքունի գործարանները տեսնալու համար էր. բայց Նորին Վեհափառութիւնը ամէն բանէն յառաջ Իզմիտու նահանգը բնակող հասարակութեան հանդստանքը քննելու հոգ տանելով՝ երբոր իմացաւ, որ անոնց բարեկեցութիւնը որ քանի մը կուսակալաց ու նահանգներ կը ծագին, աւելի գոհ եղաւ։

Այս արքունի գործարանը եւ ուրիշ տեղուանքը շրջագայելով՝ տեսաւ որ ամէն բան իր բարեկարգ կանոնը համաձայն կարգի դրուած է, հաւանեցաւ ու գործակալներուն ալ յայտնելով իր հաճութիւնը՝ խնամակալ գտնուեց. Նաեւ խեղճ մը աղքատ ու արժանաւոր եւ կարօտեալ մարդոց՝ որոնք Ճամբուն վրայ հաւաքուած էին, պարգեւ բաշխելով իր շնորհքը մատնանիշ րաւ։

Նորին Վեհափառութիւնը՝ երկու գիշեր նոյն հովանոցը հանգստանալէն յետոյ՝ շաբաթ օրը՝ որ էր երեքշաբթի, ժամը հինգին Ճամբայ ելաւ շոգենաւով, ու ժամը եօթնին հասաւ Հէրեքէյի գործարանին առաջքը, հոն ալ՝ ինչպէս որ մտքը դրած էր, շրջագայեցաւ ու շինուած կերպասները տեսնելով եւ գործարանին կարգաւորութեանը նայելով հաւանեցաւ։

Այն գիշերը գործարանին մօտ գտնուած արքունական սենեակին մէջ հանգստանալէն յետոյ՝ հետեւեալ չորեքշաբթի օրը՝ որ Մայրաքաղաքէս մեկնելուն հինգերորդ օրն էր, ժամը մէկին Ճամբայ ելաւ շոգենաւով, ու երեք ու կէսին հասաւ Փօրթ քէօյի րսած գիւղին առաջքը, որ Եալովա քաղաքէն առջին ծովեզերեայ տեղերն է. ուսկից մէկուկէս կամ երկու ժամ հեռի գտնուած գաղջաւ(?) ջուրերը գնաց տեսաւ, եւ անկէ վերջ Իզմիր (?) քաղաքէն յետոյ՝ դարձաւ շոգենաւը։

Վերադարձին՝ գիւղացիք հաւաքելով հոն բարձր ձայնիւ բարեմաղթութիւններ ըրին Նորին պատուական եւ անգին կենացը երկարութեանը համար եւ յաջողութեան մաղթեցին։ Խնամակալ Արքայն ժամը ութնին մօտ մեկնեցաւ անկէ ու 11 ին հասաւ Մայրաքաղաքս»։

Եւրոպիոյ արքունի գործարանները մինչեւ հիմա Օսմանեան քաղաքներուն մէջ տեսնուած չէր. որոնք՝ հանճարաւորութեամբ Կայսերական մերոյ հաստատելով՝ մեծ պարծանք մը եղան թէ աշխարհիս եւ թէ աղգին։ Բարեխնամ Կայսերական տանիքի աւելի մեծ մեծութեան ալ ունի, որոնցմով իր երկիրը եւ ազգութիւնը Ճշմարտապէս վերստին կենդանացուցած է. ինչպէս են՝ անձի եւ ստացուածքի վրայօք շնորհած ապահովութիւնները, որ հասարակութիւնը այժմ կը վայելէ՝ Նորին Վեհափառութեան Թագաւորական գահը ժառանգելէն ի վեր. նաեւ հողագործներուն մէջ գրամ շնորհելով եւ գանձը յօրդորելով երկրագործութիւնը իր երկրին մէջ ծաղկեցնելու հոգ տանելը, որոյ հետեւանք քննած ու Ճիշդ հասկցած է, որ մէկ երկրին ծաղկիլը՝ հողագործութեան միջոցաւ միայն կրնայ ըլլալ, եւ իր ընդարձակ երկիրներն ալ աշխարհագրական դրութեանը պատճառաւ երկրագործութեան ամէն կերպով յարմարութիւն ունի եւ շատ ալ հասոյթ կրնայ տալ, ինչպէս որ ասոր օգտակար պտուղներն ալ օր ըստ օրէ կը տեսնուին։

Ասոր վրայ ամէն մարդ իր քրտամբը ձեռք բերած հասոյթը խեղճ մը հողատէրհաւասար մարդոց կամ ենիչէրիներուն կերակուր չընելով (ինչպէս որ յառաջները կ'ըլլար,) անդամ մը օրինաւոր տասանորդը ու տուրքը տալէն վերջը՝ մնացորդը կը պահէ՝ իր աղքատ տունը Ճամբարելու համար, եւ Օսմանեան Տէրութեան կայսերական օրէնքին ու գիւղին միջոցներ տեսնալով ուրախ չափ սկսած՝ էն աշխատելու, որով յաջողութեամբն առատ, ազատութեան տասանորդին ալ օր ըստ օրէ աւելնալով, թանգանութիւն յառաջ բերած տասանորդ կանոնը կը զուարճանայ, ինչպէս որ տրամադրած է արքունի գանձատունը, այժմ անոր մինչեւ եռապատիկը հասած է. ու սկից աղէկ կը մակաբերուի հիմա երկրագործութեան մինչեւ ուր աստիճան ծաղկած ըլլալը։

Ծովեզերեայ քաղաքները նաեւ անոնց մօտ գտնուող տեղերը բնակողները իրենց ձեռք բերած հասոյթը գիւղութեամբ մը ծախելով՝ մեծ օգուտ քաղելին յայտնի է. բայց ծովեզերքէն հեռի գտնուողները՝ զուրկ էին այս օգուտէն, որովհետեւ Ճամբաները չշինուած ըլլալուն՝ հասոյթ տանելու ու բերելու դժուարութիւն կը քաշէին, այն որ բարեխնամ Արքային խնամքը դէմ ըլլալով՝ մասնաւորապէս կը բաղձայ, որ կարեւոր եղած տեղերը կամաց կամաց Ճամբաներ շինուին, նաեւ քանի մը գետերն ալ մաքրելով միջոց մը ըլլան տարանք կրելու, որոց գործադրութեանը սատարեալ պիտի նայի։

Ասա կը հասկցուի որ Նորին Վեհափառութիւնը նախ եւ յառաջ գիտակ է կարեւորագոյն եղած բաները հաստատելով ու գործարաններուն հաստատութիւնն ալ իրեն երկրորդական հարկ համարելով հոգ տարած է, եւ այս ալ՝ անկէց դուրս երկիրները տարանք քշելու կամ դրսէն գալիքներուն հարկաւորութիւնը նուազեցնելու միտք չէ. այլ՝ ինչպէս որ ամէն ազգութիւն կը բաղձայ որ իր երկրէն դուրս եղած տարանքը ներս մտածէն աւելի ըլլայ, նմանապէս Օսմանեան ազգութեան ալ ուզածը այս է. այն որ իր հողէն եղած հասոյթներուն արդիւնաւոր ըլլալը պիտի կատարէ։ Որովհետեւ քաջայայտ է թէ Եւրոպայի ամէն կողմը այսչափ յառաջացած գործարաններ գտնուած ըլլալէն՝ անկէց հոն ապրանք չը կրնար ծախուիլ, եւ ատոնց մէկ քանի գործարաններուն բանուածքը՝ Օսմանեան Տէրութեան գաւառներուն ընակչացը կարօտութիւնը չը կրնար լեցնել, ի հարկէ ուրիշ տեղերուն ապրանքին կարօտ են։

Ասոր մեծագոյն Խնամակալին՝ այս գործարանները հաստատելուն վրայօք ունեցած բարի դիտաւորութիւնը ասոնք չեն, այլ իր

